



| 2010 |

**ՀՀ կենսրոնական բանկի
բանքեր**

**1-ին
եռամսյակ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսական համակարգը	4
Վճարահաշվարկային համակարգի զարգացումներ	14
Մակրոտնտեսական ցուցանիշները 2010 թ. հունվար – մարտին	22
ՀՀ ԿԲ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	39
ՀՀ միջազգային պահուստների վիճակը և կազմը	40
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ <i>Տնտեսական հետազոտությունների վարչություն</i> <i>Կ. Պողոսյան, Ա. Մկրտչյան</i> ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումը DSGE-SVAR մոդելի միջոցով	41

ՀՀ ֆինանսական համակարգը 2010 թվականի առաջին եռամսյակում

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

31.03.2010 թվականի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 22 առևտրային բանկեր՝ 389 մասնաճյուղերով:

2010 թվականի առաջին եռամսյակում, տնտեսության ակտիվացմանը զուգընթաց, բանկային համակարգում ևս պահպանվել են նախորդ երկու եռամսյակներում ձևավորված աճի միտումները. ապահովվել է ակտիվների և վարկերի համապատասխանաբար 4.3% և 6.3% աճ:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԴԻՍԱԼԸ

2010 թվականի առաջին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր կապիտալն ավելացել է 2.5%-ով (7.0 մլրդ դրամով) և կազմել 285.4 մլրդ դրամ:

Եռամսյակի ընթացքում երկու բանկեր համալրել են կանոնադրական կապիտալը՝ ընդհանուր 4.1 մլրդ դրամի չափով:

Ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը եռամսյակի ընթացքում նվազել է 0.4 տոկոսային կետով՝ կազմելով 20.6%, իսկ ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշն աճել է 0.2 տոկոսային կետով և կազմել 28.6%:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Հաշվետու եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր պարտավորությունները ավելացել են 4.8%-ով (50.6 մլրդ դրամով) և կազմել 1 տրլն 98.2 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 15 բանկում, իսկ նվազում՝ 7 բանկում:

Պարտավորությունների կազմում ավելացել են հիմնականում ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները՝ 21.0%-ով (14.2 մլրդ դրամով) և ընդհանուր ավանդները (իրավաբանական և ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային միջոցները)՝ 5.6%-ով (35.2 մլրդ դրամով):

31.03.2010 թ. դրությամբ առևտրային բանկերի ընդհանուր ավանդների մեծությունը կազմել է 662.0 մլրդ դրամ:

Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներն ավելացել են 6.7%-ով (22.7 մլրդ դրամով), իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդները՝ 4.3%-ով (12.5 մլրդ դրամով):

Առևտրային բանկերի ներգրաված միջոցների կառուցվածքը



Եռամսյակի ընթացքում պարտավորությունների կազմում որոշակի ավելացել են իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորությունների, ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների և ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների տեսակարար կշիռները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՅԱՆՈՒՐ ԱՎՏԻՎՆԵՐԸ


Առևտրային բանկերի ընդհանուր ակտիվները 2010 թ. առաջին եռամսյակում ավելացել են 4.3%-ով (57.6 մլրդ դրամով) և կազմել 1 տրլն 383.6 մլրդ դրամ. 15 բանկում արձանագրվել է ակտիվների աճ, իսկ 7 բանկում նվազում:

Ակտիվների կազմում հիմնականում ավելացել են բանկերում թղթակցային նոստրո հաշիվները՝ 23.8%-ով (20.4 մլրդ դրամով) և տնտեսությանը տրամադրված վարկերը՝ 6.3%-ով (44.1 մլրդ դրամով):


Իրավաբանական անձանց վարկերն ավելացել են 7.9%-ով (31.4 մլրդ դրամով), ֆիզիկական անձանց վարկերը՝ 4.2%-ով (12.0 մլրդ դրամով), բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը՝ 3.2%-ով (0.7 մլրդ դրամով):

31.03.2010 թ. դրությամբ բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը կազմել է 747.5 մլրդ դրամ, որի 57.2%-ը բաժին է ընկել իրավաբանական անձանց, 39.8%-ը՝ ֆիզիկական անձանց, 3.0%-ը՝ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին:

Առևտրային բանկերի ակտիվների ծավալները



Առևտրային բանկերի ակտիվների կառուցվածքը




- | | |
|---|---|
| <ol style="list-style-type: none"> 1. Կանխիկ դրամական միջոցներ 3. Պետական արժեթղթեր 5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ 7. Վարկեր ֆիզիկական անձանց 9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ 11. Այլ արժեթղթեր 13. Պահուստաֆոնդ | <ol style="list-style-type: none"> 2. Թղթակցային հաշիվներ բանկերում 4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ 6. Վարկեր իրավաբանական անձանց 8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխատակիցներին 10. Հիմնական միջոցներ 12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկային) 14. Այլ ակտիվներ |
|---|---|

Առևտրային բանկերի ընդհանուր վարկերը և դեբիտորական պարտքերը (ներառյալ միջբանկային ավանդներն ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) հաշվետու եռամսյակում ավելացել են 4.3%-ով (34.9 մլրդ դրամով) և կազմել 841.1 մլրդ դրամ: Դրանով վարկերը և դեբիտորական պարտքերը ավելացել են 3.6%-ով և կազմել 384.4 մլրդ դրամ, իսկ արտարժույթով վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 5.0%-ով և կազմել 456.7 մլրդ դրամ: Ընդհանուր վարկային ներդրումներում և դեբիտորական պարտքերում դրամով ներդրումների տեսակարար կշիռը նվազել է 0.3 տոկոսային կետով և կազմել 45.7%:


Ոչ ռեզիդենտներին տրամադրած վարկերը և դեբիտորական պարտքերը նվազել են 14.8%-ով, իսկ ռեզիդենտներին տրամադրած վարկերը և դեբիտորական պարտքերը ավելացել են 5.9%-ով և համապատասխանաբար կազմել 51.0 մլրդ դրամ և 790.1 մլրդ դրամ:

Ռեզիդենտների վարկերում հիմնականում ավելացել են առևտրի ճյուղին տրամադրված վարկերը (15.5 մլրդ դրամ աճ), ինչի արդյունքում դրանց տեսակարար կշիռը ռեզիդենտների վարկային ներդրումների կառուցվածքում ավելացել է 0.9 տոկոսային կետով:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների ծավալները ըստ տնտեսության ճյուղերի



Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ,
5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված,
8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

Առևտրային բանկերի ստանդարտ ակտիվների տեսակարար կշիռը նվազել է 0.6 տոկոսային կետով՝ կազմելով ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 95.2%-ը: 31.03.2010թ. դրությամբ բանկային համակարգի «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 2.5%-ը, «ոչ ստանդարտ» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.8%-ը, «կասկածելի» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.5%-ը:

Առևտրային բանքերի ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշը եռամսյակի ընթացքում նվազել է 0.5 տոկոսային կետով, իսկ ընթացիկ իրացվելիության ցուցանիշը՝ 0.4 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել 33.9% և 140.4%:


ԱՌՆՎՏՐԱՅԻՆ ԲԱՆՔԵՐԻ ԵՎԱՍՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

Ըստ բանկային համակարգի վերահսկողական հաշվետվությունների՝ 2010թ. առաջին եռամսյակում ստացված զուտ շահույթը (շահույթը հարկումից հետո) կազմել է 4.2 մլրդ դրամ¹, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 1.3%, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 6.1%: Շահույթով են աշխատել 18 բանկ, վնասով՝ 4 բանկ:

ՖՅՄՍ համաձայն՝ բանկային համակարգի զուտ շահույթը 2010 թվականի առաջին եռամսյակում կազմել է 6.7 մլրդ դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 2.0%, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 9.5%:

Առևտրային բանկերն ապահովել են ընդհանուր 55.0 մլրդ դրամ համախառն եկամուտ՝ միաժամանակ իրականացնելով 49.6 մլրդ դրամ համախառն ծախսեր (վերահսկողական հաշվետվությունների հիման վրա): Հաշվետու եռամսյակի վերջին բանկային համակարգի շահույթը մինչև հարկումը կազմել է 5.4 մլրդ դրամ:

Առևտրային բանկերի եկամուտների և ծախսերի կառուցվածքը 2010 թ. առաջին եռամսյակում



Առևտրային բանկերի ընդհանուր եկամուտների կազմում տոկոսային եկամուտների 81.1%-ը բաժին է ընկել տնտեսության վարկերից ստացված եկամուտներին: Ոչ տոկոսային եկամուտների կազմում մեծ տեսակարար կշիռներ են ունեցել միջնորդավճարներից և արտարժույթի առք ու վաճառքից ստացված եկամուտները, որոնք համապատասխանաբար կազմել են 46.6% և 33.3%:

Առևտրային բանկերի ծախսերի կազմում տոկոսային ծախսերի զգալի՝ 52.2%-ը, բաժին է ընկել ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներին: Ոչ տոկոսային ծախսերի 42.9%-ը բաժին է ընկել բանկային համակարգի աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին:

Եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր զուտ մասհանումների մեծությունը (4.6 մլրդ դրամ) կազմել է ընդհանուր ակտիվների 0.3%-ը:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2010 թվականի առաջին եռամսյակում վարկային կազմակերպության գործունեության լիցենզիա է ստացել «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ-ն:

31.03.2010թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել է 28 վարկային կազմակերպություն՝ 56 մասնաճյուղերով:


¹ ԿԲ ներկայացվող հաշվետվությունների և ՖՅՄՍ համաձայն՝ շահույթի մեծությունների խոշոր տարբերության հիմնական պատճառը ստանդարտ ակտիվների 1%-ի չափով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումներ կատարելն է, քանի որ բանկերը այդչափով են ծախս ճանաչում:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակում ավելացել են 11.9%-ով (9.0 մլրդ դրամով) և կազմել 84.8 մլրդ դրամ: Ակտիվների աճ է արձանագրվել 26, իսկ նվազում՝ 2 վարկային կազմակերպությունում:


2010 թվականի առաջին եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի և լիզինգի ընդհանուր ծավալը ավելացել է 5.1%-ով կամ 2.5 մլրդ դրամով և կազմել 52.9 մլրդ դրամ: Դրամով տրամադրված վարկերի և լիզինգի ծավալը ավելացել է 7.1%-ով (1.9 մլրդ դրամով), արտարժույթով տրամադրված վարկերի և լիզինգի ծավալը նվազել է 2.8%-ով (0.7 մլրդ դրամով): Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ավելացել են 5.8%-ով և կազմել 33.8 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց տրամադրված վարկերը ավելացել են 7.1%-ով և կազմել 12.8 մլրդ դրամ: Լիզինգի ծավալը նվազել է 7.6%-ով՝ կազմելով 4.9 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր ծավալը ավելացել է 9.1%-ով (5.9 մլրդ դրամով)՝ կազմելով 71.1 մլրդ դրամ: Եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներում ավելացել են գյուղատնտեսության, շինարարության ճյուղերի և ֆինանսական հատվածին տրամադրված վարկերի տեսակարար կշիռները:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների ծավալները ըստ տնտեսության ճյուղերի



Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներն ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ,
5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված,
8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով եռամսյակի ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում «ստանդարտ» վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը նվազել է 0.3 տոկոսային կետով և կազմել 95.6%: 31.03.2010թ. դրությամբ վարկային կազմակերպությունների «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 2.8%-ը, «ոչ ստանդարտ» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.0%-ը, «կասկածելի» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.6%-ը:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը աճել է 11.5%-ով (3.0 մլրդ դրամով) և կազմել 29.3 մլրդ դրամ: Վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալը ավելացել է 3.0 մլրդ դրամով՝ պայմանավորված այս շուկա «Բնակարան երիտասարդներին» ՈւՎԿ ՓԲԸ-ի մուտքով:

Ըստ վարկային կազմակերպությունների վերահսկողական հաշվետվությունների՝ հաշվետու եռամսյակում ստացված զուտ շահույթը կազմել է 72 մլն դրամ: Տարեսկզբից շահույթով է աշխատել 23 վարկային կազմակերպություն, իսկ վնասով՝ 5 վարկային կազմակերպություն:

ՖՅՄՍ համաձայն՝ վարկային կազմակերպությունների զուտ շահույթը 2010 թվականի առաջին եռամսյակում կազմել է 1.2 մլրդ դրամ:

Ընդհանուր պարտավորությունները ավելացել են 12.1%-ով (6.0 մլրդ դրամով) և տարեվերջի դրությամբ կազմել 55.6 մլրդ դրամ: Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները ավելացել են 3.0 մլրդ դրամով, ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունները՝ 3.0 մլրդ դրամով և 1.8 մլրդ դրամով, ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները՝ 1.1 մլրդ դրամով:

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքը 31.03.2010 դրությամբ


Արտաքին աշխարհի նկատմամբ ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները¹ 2010 թվականի առաջին եռամսյակի վերջին կազմել են 450.3 մլն դոլար՝ նախորդ եռամսյակի վերջի 462.1 մլն դոլարի փոխարեն: 2010 թվականի առաջին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավել են 91.9 մլն դոլար վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 86.9 մլն դոլար հիմնական գումարի մարումներ²:

2010 թվականի առաջին եռամսյակի վերջին առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել՝ Ռուսաստանը, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 13.5 % (նախորդ եռամսյակում՝ 17.4 %), Լյուքսեմբուրգը՝ 11.8 % (նախորդ եռամսյակում՝ 6.5%), Ֆրանսիան՝ 11.8 % (նախորդ եռամսյակում՝ 11.5 %), Գերմանիան՝ 9.9 % (նախորդ եռամսյակում՝ 9.7 %), Լատվիան՝ 7.1 % (նախորդ եռամսյակում՝ 6.8 %): Վարկերի մոտ 22 %-ը տրվել է միջազգային կազմակերպությունների կողմից³:

Բանկերը և վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավված վարկերը հիմնականում տեղաբաշխել են տնտեսության հետևյալ հատվածներում՝ 156 մլն դոլարը՝ ֆինանսական, 84 մլն դոլարը՝ արդյունաբերության, 72 մլն դոլարը՝ առևտրի և 46 մլն դոլարը՝ սպառողական և հիփոթեքային վարկերի:

2010 թվականի առաջին եռամսյակի վերջին ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ տարվա վերջի համեմատ չի փոփոխվել և կազմել է 5.7 %: Արտաքին վարկերի մոտ 66.9 %-ը լողացող (LIBOR, EURIBOR, ԿԲ ՊՊ) տոկոսադրույքով է: Վարկերի միջին ժամկետայնությունը մոտ 4.8 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռը նվազել է և կազմել ներգրավված վարկերի 3.4 %-ը՝ նախորդ եռամսյակի վերջի 7.4 %-ի փոխարեն:

ՀՀ առևտրային բանկերի արտաքին մասնավոր պարտքը 2003 – 2010 թթ.



¹ Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:

² Նախորդ ժամանակահատվածում և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում զուտ ներգրավված միջոցների գումարը տարբերվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի փաստացի ցուցանիշից, քանի որ ներգրավված միջոցներն արտահայտված են տարբեր արժույթներով, ինչի հետևանքով դրանք դոլարային համարժեքի վերածելիս պարունակում են փոխարժեքի հաշվին վերագնահատումները:

³ Նախորդ հրապարակումներում միջազգային կազմակերպություններից ստացված վարկերը ներառել են նաև որոշ ոչ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված միջոցները, որոնք հաշվետու եռամսյակում վերադասակարգվել են:

Վարկային կազմակերպությունների պարտավորությունների կազմում 31.03.2010թ. դրությամբ բանկերի նկատմամբ պարտավորությունները կազմել են 21.8 մլրդ դրամ, այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները՝ 13.1 մլրդ դրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունները՝ 13.3 մլրդ դրամ, ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները՝ 5.1 մլրդ, այլ պարտավորությունները՝ 2.3 մլրդ դրամ:

**ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

31.03.2010 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործել են 12 ապահովագրական ընկերություններ²:

Հաշվետու եռամսյակում ապահովագրական ընկերությունների ակտիվները նվազել են 1.0%-ով՝ 31.03.2010 թ. դրությամբ կազմելով 16.8 մլրդ դրամ, պարտավորությունները նվազել են 2.1%-ով՝ կազմելով 4.6 մլրդ դրամ, իսկ ընդհանուր կապիտալը նվազել է 0.6%-ով՝ կազմելով 12.2 մլրդ դրամ:

Ապահովագրական ընկերությունների ակտիվների կառուցվածքում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են կազմել բանկերում ավանդները (64.7%), ուղղակի ապահովագրության գծով ապահովագրողներից ստացվելիք գումարները (9.7%) և բանկային հաշիվները (6.9%):

Ապահովագրական ընկերությունների պարտավորությունների կառուցվածքում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են կազմել չվաստակած ապահովագրավճարների պահուստը (48.2%) և վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարները (19.6%):

Ըստ ապահովագրական ընկերությունների վերահսկողական հաշվետվությունների՝ 2010 թվականի առաջին եռամսյակում շահույթը (հարկումից հետո) կազմել է 362.6 մլն դրամ: Շահույթով են աշխատել 9, իսկ վնասով՝ 2 ընկերություն: Շահույթով աշխատած ընկերությունների շահույթը կազմել է 732.9 մլն դրամ:

ՖՀՄՍ համաձայն՝ ապահովագրական ընկերությունների զուտ շահույթը 2010 թվականի առաջին եռամսյակում կազմել է 712 մլն դրամ:

2010 թվականի առաջին եռամսյակում հաշվեգրվել է 1.9 մլրդ դրամ ապահովագրավճար, իսկ վերաապահովագրողին փոխանցվել է 569.1 մլն դրամ կամ ապահովագրավճարների 30.0%-ը:

Ապահովագրական հատուցումների մեծությունը կազմել է 354.6 մլն դրամ, իսկ ապահովագրական հատուցումների գծով վերաապահովագրողներից ստացվել է 114.4 մլն դրամ կամ ապահովագրական հատուցումների 32.2%-ը:

31.03.2010 թ. դրությամբ ապահովագրական ընկերություններն ունեցել 48.6 հազար գործող ապահովագրության պայմանագիր, որոնց գծով ապահովագրական գումարների մեծությունը կազմել է 3.34 տրլն դրամ: Ապահովագրական գումարներից վերաապահովագրողներին փոխանցված ռիսկերի վերաապահովագրական գումարների մեծությունը կազմել է 2.9 տրլն դրամ կամ ապահովագրական գումարների 86.8%-ը:

**ԱՐԺԵՂԹԵՐԻ ՀՈՒԿԱՅԻ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**


2010 թվականի մարտի 31-ի դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում գործել են ներդրումային ծառայություններ մատուցող 22 բանկ և 8 ներդրումային ընկերություն, ընդ որում՝ բոլոր ութ ընկերությունները կարող են իրենց կամ հաճախորդի անունից և իրենց կամ հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ իրականացնել: Ներդրումային ութ ընկերությունները կարող են նաև հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականներ ընդունել և հաղորդել, հինգը՝ արժեթղթերով ներդրումների հետ կապված խորհրդատվություն տրամադրել, վեցը՝ իրականացնել արժեթղթերի տեղաբաշխման գործունեություն և երեքը՝ արժեթղթերի փաթեթի կառավարում:

31.03.2010թ. դրությամբ ներդրումային ընկերությունների ընդհանուր ակտիվները կազմել են 13.9 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ նվազելով 10.8%-ով: Ներդրումային ընկերությունների ընդհանուր կապիտալը եռամսյակի ընթացքում նվազել է 0.5%-ով՝ կազմելով 2.9 մլրդ դրամ:

² Ներկայացված են 11 ապահովագրական ընկերությունների ցուցանիշները, քանի որ Լոնդոն-երևան ընկերությունը 2010 թվականի առաջին եռամսյակի համապատասխան հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ չի ներկայացրել:

ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային գործառնության շրջանակներում իրականացված արժեթղթերի առքուվաճառքի գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 22.5%-ով՝ կազմելով 50.4 մլրդ դրամ, կորպորատիվ պարտատոմսերով իրականացված գործառնությունների ծավալը նվազել է 73.5%-ով և կազմել 1.6 մլրդ դրամ, բաժնետոմսերով առք ու վաճառքի գործառնությունների ծավալը նվազել է 33.5%-ով՝ կազմելով 1.8 մլրդ դրամ, պետական պարտատոմսերով առքուվաճառքի գործառնությունների ծավալը նվազել է 16.3%-ով՝ կազմելով 47.0 մլրդ դրամ: 2010թ. առաջին եռամսյակի արդյունքներով ՀՀ արժեթղթերի շուկայի շրջանառության մեջ գերակշռել են պետական պարտատոմսերով գործառնությունները, որոնց տեսակարար կշիռն ընդհանուր շրջանառության մեջ կազմել է 93.2%: Կորպորատիվ պարտատոմսերով և բաժնետոմսերով իրականացված գործառնությունների տեսակարար կշիռներն ընդհանուր շրջանառության մեջ համապատասխանաբար կազմել են 3.2% և 3.6%:

Ներդրումային ընկերությունների կողմից 2010 թ. իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ծավալները



Պետական պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունների մեջ գերակշռել են պետական միջին ժամկետայնության պարտատոմսերով իրականացված գործառնությունները (70%, նախորդ եռամսյակում՝ 77%): Պետական կարճաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերով գործառնությունների տեսակարար կշիռները կազմել են ընդհանուր շրջանառության համապատասխանաբար 20%-ը և 10%-ը (նախորդ եռամսյակում՝ համապատասխանաբար 20%-ը և 3%-ը):

Եռամսյակի ընթացքում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առքուվաճառքի գործառնությունները կազմել են ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված առքուվաճառքի գործառնությունների ընդհանուր ծավալի 16.7%-ը:

Կարգավորվող շուկայում իրականացված գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 36%-ով և կազմել 4.2 մլրդ դրամ, ընդ որում՝ շրջանառության 58%-ը կազմել են ռեպո գործառնությունները, 7.2%-ը՝ կորպորատիվ պարտատոմսերի և 24.7%-ը՝ պետական պարտատոմսերի առքուվաճառքի գործառնությունները:

Ներդրումային գործառնությունների շրջանակներում կարգավորված շուկայից դուրս իրականացված գործառնությունների 89%-ը կազմել են ներդրումային ծառայություններ մատուցող առևտրային բանկերի կողմից իրականացված գործառնությունները, 11%-ը՝ ներդրումային ընկերությունների կողմից իրականացված գործառնությունները:

Ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը (ներառյալ կարգավորվող շուկայում իրականացված ռեպո գործառնությունները) նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 16%-ով և կազմել 539 մլրդ դրամ, որից 219.5 մլրդ դրամը կազմել են երկարաձգված գործարքները:

31.03.2010թ. դրությամբ հավատարմագրային կառավարման վերցված միջոցների ծավալը կազմել է 2.0 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ ավելանալով 4%-ով:

31.03.2010թ. դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողների թիվը կազմել է 1552 ընկերություն, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը կազմել է 124092 մարդ:

31.03.2010թ. դրությամբ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված են եղել 17 թողարկողների արժեթղթեր: Թողարկողներից 4-ը բանկ են: Ընդ որում, 11-ը թողարկել են բաժնետոմսեր (30.1 մլրդ դրամ ընդհանուր ծավալով), իսկ 7-ը՝ պարտատոմսեր (3.7 մլրդ դրամ ընդհանուր ծավալով): «Արարատ բանկ» ԲԲԸ-ն թողարկել է ինչպես բաժնային, այնպես էլ պարտքային արժեթղթեր: Թողարկված պարտքային արժեթղթերի 13%-ը բաժին է ընկել տնտեսության ֆինանսական հատվածում գործունեություն ծավալող ընկերություններին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2010 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից փոփոխություններ են կատարվել մի շարք իրավական ակտերում: Բանկային շուկայի կարգավորման դաշտում փոփոխություններ են կատարվել «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում, մասնավորապես՝

- Սահմանվել է, որ բանկերի կողմից արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց կենտրոնական բանկում իրականացվող պարտադիր պահուստավորումը, որը կազմում է ներգրավված միջոցների առնվազն 12 տոկոսը, այսուհետ 3%-ով պետք է իրականացվի ՀՀ դրամով, իսկ 9%-ով՝ համապատասխան արտարժույթով:
- ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը շարունակելու են հաշվարկել արտարժույթի տնօրինման նորմատիվ, որը մինչև սույն թվականի օգոստոսի 1-ը՝ բոլոր արտարժույթների երկար դիրքերի հանրագումարի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունն է (10%), իսկ 2010 թվականի օգոստոսի 1-ից լինելու է բանկի արտարժույթային համախառն դիրքի և ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը (10%): Մինչև 2010 թվականի հուլիսի 31-ը բանկերը, ըստ առանձին արտարժույթների, հաշվարկելու են յուրաքանչյուր արտարժույթի երկար դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը (7%), իսկ 2010 թվականի օգոստոսի 1-ից՝ յուրաքանչյուր արտարժույթի բաց դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը (7%):
- Սահմանափակվել է բանկի չբաշխված շահույթի տեսակարար կշիռը ընդհանուր կապիտալի հաշվարկում: Բանկի չբաշխված շահույթը բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում պետք է ներառվի բանկի կանոնադրական կապիտալի առավելագույնը 150 տոկոսի չափով:
- Սահմանվել է, որ բանկի հիմնական կապիտալից պետք է նվազեցվեն նաև ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների կապիտալներում կատարված ներդրումները, եթե դրանք գերազանցում են սահմանված սահմանաչափերը:
- Սահմանվել է, որ Ն3 նորմատիվը չի հաշվարկվելու Կառավարության նկատմամբ:
- Կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկում արտարժույթային ակտիվների համար սահմանվել են ավելի խիստ ռիսկի կշիռներ, քան նմանատիպ դրամային ակտիվների համար (մասնավորապես՝ դրամային վարկերի համար սահմանված 50, 75 և 100% ռիսկի կշիռները արտարժույթային վարկերի համար սահմանվել են համապատասխանաբար 75, 110 և 150%):

Ակնկալվում է, որ կատարված փոփոխությունների արդյունքում տեղի կունենա բանկային գործունեության կարգավորման դաշտի համապատասխանեցում բանկային համակարգի ռիսկայնության մակարդակին:

Արժեթղթերի շուկայի կարգավորման դաշտում նույնպես փոփոխություններ են կատարվել.

1. ՀՀ ԿԲ խորհրդի 2010 թ. հունվարի 19-ի թիվ 2-Ն որոշմամբ հաստատվել է «Արժեթղթերը հանձնելու առաջարկի հայտարարագրի կազմը, առաջարկի և դրա պայմանների փոփոխությունների հրապարակման կարգը, առաջարկի շուկայական գնի հաշվարկման կարգը, արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկի իրականացման կարգը արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրի թույլտվության դադարեցման դեպքում, արժեթղթերը հանձնելու առաջարկն ընդունելու կամ մերժելու

մասին ցանկացած հրապարակային առաջարկության կամ խորհրդի կատարման կարգը» կանոնակարգ 4/10-ը, որով կսահմանվեն արժեթղթերը հանձնելու առաջարկը կարգավորող այնպիսի կանոններ, որոնք լավագույնս կպաշտպանեն տվյալ արժեթղթերի սեփականատերերի շահերը և հնարավորինս համահունչ կլինեն Եվրոմիության չափանիշներին:

2. ԶԳ ԿԲ նախագահի 2010թ. փետրվարի 24-ին թիվ 1/139Ա որոշմամբ հաստատվել է «Ներդրումային ընկերություններում ստուգումների իրականացման» ձեռնարկը, որը հնարավորություն կընձեռնի ապահովելու ներդրումային ընկերություններում ամբողջական և համակողմանի ստուգումների, վերահսկողների կողմից ներդրումային ընկերություններում կատարված ստուգումների ընթացքում անհրաժեշտ նվազագույն գործընթացների իրականացումը, տարբեր վերահսկողների կողմից ստուգումների իրականացման, ստուգման արդյունքների ամփոփման, ստուգման արդյունքների փաստաթղթավորման միասնական մոտեցումների կիրառումը: Բացի այդ, ձեռնարկի նպատակն է ձևավորել ներդրումային ընկերությունում ստուգման արդյունքների գնահատման արդյունավետ համակարգ՝ ըստ ստուգման առանձին բաժինների, ինչը հնարավորություն կտա մեկ աղյուսակում ներառված գնահատականների միջոցով ամբողջական պատկերացում կազմել, թե ներդրումային ընկերության որ բնագավառներն են առավել ռիսկային, որ ոլորտներում խնդիրներ ու թերություններ կան և, ըստ այդմ, նախատեսել ռիսկերի կանխարգելմանը, խնդիրների և թերությունների վերացմանը նպատակաուղղված վերահսկողական միջոցառումներ:
3. ԶԳ ԿԲ խորհրդի 2010թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ում: Նշված փոփոխությունները և լրացումները հիմնականում կապված են.
 - ներդրումային ընկերությունների համար կապիտալի համարժեքության նոր նորմատիվի սահմանման հետ, ինչով պայմանավորված՝ կանոնակարգը համալրվել է կապիտալի համարժեքության նորմատիվի վերաբերյալ նոր հաշվետվական աղյուսակներով:
 - IOSCO-ի սկզբունքներին հնարավորինս համապատասխանելու հետ, որի արդյունքում սահմանվել է դրույթ, համաձայն որի՝ ներդրումային ընկերությունները կտեղեկացնեն ԿԲ-ին իրենց նորմատիվային ընդհանուր կապիտալի՝ որոշակի չափից նվազման վերաբերյալ: